ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 22 մարտի 2019թ.
թիվ 1 որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»
հիմնադրամի 2018թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն
1.2 Գտնվելու վայրը	ք. Երևան, Օրբելի 22
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01049
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	24.12.2008
1.5 ՀՎՀՀ-ն	00257962
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+37410229145
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.anqa.am
1.8 Էլեկտրոնային փոստը	info@anqa.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
ՀՀ կառավարություն	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
Վարուժան Ավետիքյան Սեդրակ Սիմոնյան Էդուրադ Կիրակոսյան Սերյան Սարգսյան Էդգար Ալեքսանյան Ալեքսանդր Գրիգորյան Լուսինե Ֆլջյան Սուրեն Օհանյան	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	
Ռուբեն Թոփչյան	
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց անուն, ազգանուն՝	
Լիլիթ Ղազարյան Հայկուհի Բարսեղյան Օֆելյա Պետրոսյան Դավիթ Պետրոսյան Լիլիթ Պիպոյան Գայանե Անանյան Վարդուհի Գյուլազյան Անուշավան Մակարյան Լիլիթ Զաքարյան Անահիտ Ութմազյան Սուսաննա Պողոսյան Վաղինակ Վարդանյան Գեորգի Ալեքսանդրյան Հասմիկ Ստեփանյան Էլլա Կարագուլյան	

8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր	Հավատարմագրում, վերապատրաստում, Տեմպուս կրթական ծրագիր Այլ	29 914 888 7 340 954 4 325 000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	9.2 Գույք	
	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	109 066 052	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	109 066 052	

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 3 էջից:

Հիմնադրամի տնօրեն Ռուբեն Թոփչյան

Գլխավոր հաշվապահ Սուսաննա Պողոսյան

«Մասնագիտական Կրթության Որակի Ապահովման Ազգային Կենտրոն» Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ,
Փետրվար 2019թ.

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ

ՀՀ , ք Երևան
Նուբարաշեն, 10 փող, տուն 6 Հեռ: 57 28 42
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1
Աուդիտորական գործունեության լիցենզիա թիվ ԱԾ N 048 առ 02.08.2006թ.
տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից՝ անժամկետ

Անկախ աուդիտորի եզրակացություն

Ներկայացվում է «Մասնագիտական Կրթության Որակի Ապահովման Կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մասնագիտական Կրթության Որակի Ապահովման Կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2018թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը

ներառող աուդիտորի եզրակացություն:
Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին՝ դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:
Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

22 փետրվարի 2019թ.

Տնօրեն Մելս Պետրոսյան

Աուդիտոր Արթուր Մխիթարյան